մասին, հիմնավոր է և ենթակա է բավարարման:

6. Դատական ծախսերի վերաբերյալ եզրահանգում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝բազային տուրքի 100-ապատիկի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար՝ տվյալների մշակման կենտրոնի համակարգերի կառուցման և ինժեներական կահավորման համար նախագծման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԲԿԳԿ-ՀԲՄԾՁԲ-24/48 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ արձանագրությունով՝ «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի

մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել 25.04.2024 թվականի թիվ «ԲԿԳԿ-ՀԲՄԾՁԲ-24/48» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության՝ «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

3. ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման օրը

Վճիռը կարող է բողոքարկվել հրապարակման պահից 1 ամիս հետո

Դատավոր՝ **Սերինե Խաչատրյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am